

տունը թողլէ վերջ՝ երբ կ'իջնէին Սելովամի աւազանը: Այս եկեղեցին թէև քիչ հեռի քաղաքին պարսպէն, չէր գտնուեր այն անմիջական ճանապարհին վրայ՝ որ ամբողջեանց ստորոտը կ'երկարէր: Այս ճանապարհէն դուրս, աջին կ'իյնար, երբ Սիոնի բարձրութեան արեւելեան զառիվայրէն կ'իջնէին Սելովամի ուղղութեամբ: Քաղաքին դուռնէն դէպի հարաւ գացող պողոտային վրայ ճիւղաւորուած սանդխաւոր ճամբայ մը թոյլ կու տար ուղղակի հոն մտնել: Ճանապարհը ճիւղաւորումէն սկսեալ յիսուն աստիճան էր: Եկեղեցին շինուած էր խիստ խոր և խիստ մթին քարայրի մը վրայ, ուր, կ'ըսեն թէ, Պետրոս առաքեալ ապաստանած էր քաւելու համար իր մեղքը: Գրեթէ 32 աստիճաններով սանդուխ մը սեղանին ձախէն կը տանէր այրին խորը, ուր նկար մը կը յիշեցնէր այն աւետարանական յիշատակը՝ որուն նուիրուած էր այս սրբավայրը: . . . 1172ին, Հայոց ձեռքն էր նոյն եկեղեցին. լատին տիրապետութենէն մինչ մէկ զար վերջ կանգուն էր եկեղեցին, բայց 1323ին ան աւերակ էր: Ս. Սիոնի աւերակներէն մէկ նետընկեց հեռուէն ցոյց կու տային դաթալանցի ուխտաւորները, ուր՝ կ'ըսէին թէ, կար գեղեցիկ եկեղեցի մը հին ժամանակ:

Կործանումը այնքան արմատական էր որ, 1335ին, Jacques de Verone եկեղեցիի հետք չի գտներ այլեւս, բայց այրը՝ 140 քայլ Կայիափայի տունէն, (ըստ Polonerի 187) կը հրապուրէր ուխտաւորները: 1461ին Louis de Rochechouart հետեւալ կերպով կը նկարագրէ այն տեղը՝ ուր Պետրոս դառնօրէն լացաւ. «բոլորակ տեղ մ'է ան, վասն զի երբեմն հոն շինուած էր բոլորչի մատուռ մը, որուն հետքերը այժմ հազիւ նշմարելի են»:

Փապրի (1480-83) իր բոլոր բարի կամեցողութեան հակառակ չյաջողեցաւ գտնել Հաւախօսի այրը: Ստոյգ է թէ այս թուականին Պետրոսի Հառաչանաց եկեղեցին չէին տեղականացըներ այրի մը մէջ: Քարայր ըստածը այն ատեն կը նկատէին ցցուած քար մը որմէ ուխտաւորները յիշատակի համար կը փրցընէին կտորներ. և կը մտածուի այս բարեպաշտական սովորութեան մէջ գտնել ս. այրին անհետացման բաւականաչափ բացատրութիւն մը: Փապրիի կողմէն նշանակուած արտքական ջրօւղիի մը մերձաւորութիւնը թոյլաւարած է P. Germer-Durandի ստոյգ եղանակաւ մը Պետրոսի Հառաչանաց վանքին նոր տեղը